«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիր»

Համաձայնագրի իրականացման արդյունքում ստացված օգուտը սոցիալական ապահովության, կրթության, գիտության, առողջապահության և մշակույթի ոլորտներում



«Վրաստանի և Եվրամիության միջև ասոցացման համաձայնագիրը» նախատեսում էՎրաստանի մերձեցումը Եվրամիության քաղաքականությանը և փորձին, այդ թվում՝ կրթության և գիտության, սոցիալական ապահովության, առողջապահության և մշակույթի ոլորտներում: Համաձայնագրի իրականացման արդյունքում Վրաստանի քաղաքացիները կստանան կոնկրետ օգուտ, այդ թվում.

- Կստեղծվեն արժանավայել աշխատատեղեր, կմշակվի Եվրամիության չափանիշներին համապատասխանող աշխատանքի ընդունման քաղաքականություն, կներքաշվեն աշխատանքի անվտանգության նորմերը և սոցիալական ապահովության մեխանիզմները
- Կանցկացվեն ռեֆորմներ առողջապահության բնագավառում բարձր չափանիշներ ապահովելու համար, Եվրամիության հետ միասին կգործարկվեն միասնական ծրագրեր
- Առողջապահության ոլորտում կմշակվեն մարդկային ռեսուրսները, կատարելագործված կլինեն կառավարումը և ֆինանսավորումը, համաճարակաբանական հիվանդություններին հետևելը, ինֆեկցիոն հիվանդությունների վերահսկումը, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և վերահսկումը
- Տեղի կունենա Վրաստանի մերձեցումը Եվրամիության քաղաքականության և պրակտիկայի հետ կրթության և գիտության ոլորտում. Բարձրագույն կրթության որակը համապատասխանության կգա Եվրամիության լավագույն պրակտիկայի և Բոլոնյան գործընթացի հետ
- Կամրապնդվի համագործակցումը ակադեմիական ոլորտում, որը ենթադրում է ինստիտուցիոնալ համագործակցման ընդլայնում ԵՄ անդամ պետությունների միջև և Վրաստանի բարձրագույն կրթական հաստատությունների հետ, ինչպես նաև Եվրոպական փորձի կիսում կուրիկուլումի մշակման մեջ, համալսարաններում ենթակառույցների բարելավում, վարչարարության և այլ հարցերի մեջ նոր մեթոդների ներմուծում, ինչպես նաև փոխանակման ծրագրերի ընդլայնում ուսանողների և ակադեմիական պերսոնալի համար, գործընկեր երկրների ուսանողների մասնակցություն միասնական

մագիստրային աստիճանի ծրագրերին

- Հաշվի առնելով վերոհիշյալը, կբարձրանա ուսանողության համար հասանելիությունը որակային եվրոպական կրթությանը թոշակի և. փոխանակման ճանապարհով, ինչը նաև կօգնի Վրաստանի ինտեգրմանը ԵՄ կրթության և գիտության բնագավառում: Սրա հետ միասին Համաձայնագիրը Վրաստանի գիտնականների համար հասանելի կդարձնի գործընկեր-երկրների համապատասխան ծրագրերը, կբարձրացնի վրաց հետազոտողների ներգրավումը ԵՄ շրջանակային հետազոտական ծրագրեր, նաև կօգնի համատեղ նախագծերի, հետազոտությունների փոխանակման իրականացմանը և այլ ծրագրերի իրականացմանը
- Համաձայնագիրը նախատեսում է նաև ողջ կյանքի ընթացքում ուսուցման խրախուսում և համագործակցում մասնագիտական կրթությունը և մասնագիտական ոլորտները զարգացնելու նպատակով, ինչը կխթանի զբաղվածությանը
- Կխորանա համագործակցումը ԵՄ հետ մշակույթի ոլորտում, կկայանա երկխոսություն մշակույթի քաղաքականության հարցով, այդ թվում՝ մշակույթի բաղադրիչ բազմազգության տեսակետից
- Կխրախուսվի մշակութային բազմազանության ապահովումը, երկխոսությունը, համագործակցումը և մշակույթի ոլորտի աշխատակիցների համատեղ նախագծերի իրականացումը, կբացվի մուտքը դեպի ֆինանսական միջոցներ կուլտուրական միջոցառումներ ինչպես երկրի ներսում, այնպես էլ ԵՄ մակարդակով անցկացնելու համար, ինչպես նաև կխրախուսվի ֆինանսական աջակցություն ցուցաբերելու պրակտիկան և մշակութային ժառանգության և բարձր գնահատվող առարկաների կայուն զարգացումը, ավանդական արտահայտման ձևերը և այլ ուղղությունները,
- Օժանդակություն կցուցաբերվի առողջ կենսակերպին, սոցիալ-կրթական արժեքների զարգացմանը սպորտում ինչպես նաև սպորտսմենների շարժականությանը

Կխրախուսվի Վրաստանի մասնագետների լայն մասնակցությունը ԵՄ ծրագրերում և գործակալություններում, ինչը կստեղծի նոր հնարավորություններ համագործակցումը խորացնելու նպատակով:

Հրատարակությունը պատրաստված է Համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանի կողմից» Ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ (NationalEndowmentforDemocracy), «Աջակցում խիտ բնակեցված տարածաշրջաններում ազգային փոքրամասնությունների քաղաքացիական հասարակության զարգացմանը» նախագծի շրջանակներում: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն համաքաղաքացիական շարժում «Բազմազգ Վրաստանը»: «Բազմազգ Վրաստանի» հայացքները կարող են չհամընկնել ժողովրդավարության աջակցման Ազգային հիմնադրամի կարծիքին: